



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«*10*» դեկտեմբերի 2019 թվականի N:*330*

ք.Գյումրի

**ՀԱՍՄԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հասմիկ Նազարյանի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի դիմումը.

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Նազարյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 5 աշխատանքային օր՝ 2019 թվականի դեկտեմբերի 13-ից 19-ը ներառյալ:
2. Հասմիկ Նազարյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության պատմության ուսուցիչ Նաիրա Մխիթարյանին:



Իսկական հետ ճիշտ է

**Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
փոխարինող